Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզ «Աբովյանի Վ. Համբարձումյանի անվան N 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում ֆիզկուլտուրայի (57 դասաժամ (2 դրույք, 13 դասաժամ)), դասվարի (13 դասաժամ), պատմության (9 դասաժամ), հայոց եկեղեցու պատմության (3 դասաժամ), հասարակագիտության (2 դասաժամ), մաթեմատիկայի (5 դասաժամ), հայոց լեզվի (24 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

2.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3.Անձը հաստատող փաստաթուղթ ,

4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

5. Ինքնակենսագրություն (Ձև 5),

6.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են ՀՀ կրթության , գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքէջում հայտարարությունը հրապարակելու օրվանից ՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ սեպտեմբերի 5-16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 22-ին՝ ժամը 13:00-ին, Կոտայքի մարզի «Աբովյանի Վ. Համբարձումյանի անվան N 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում. հասցեն՝ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Սուրեն Մնացականյանի 5:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0222) 2-18-61 կամ (0222) 2-11-91 հեռախոսահամարներով: